5) Պայմանագիրը համապատասխանում է Կողմերի կամահայտնությանը, իրենց համար պարզ և ընդունելի են Պայմանագրի կնքման և դրա չկատարման իրավական հետևանքները:

## VII. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

15. Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

16. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

## VIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ/Ն>

17. Պայմանագիրը հանդիսանում է Կողմերի միջև լիիրավ համաձայնություն՝ դրանում արտացոլված դրույթների վերաբերյալ:

18. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Պայմանագրի մեկնաբանման, ինչպես նաև այլ պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

19. Կողմերի միջև այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, կարգավորվում են կողմերի համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

20. Պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ Պայմանագրով:

21. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի (նրանց լիազոր ներկայացուցիչների) կողմից:

22. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետի ավարտը: Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը Կողմերին չի ազատում պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունները պատշաճ կատարելու պարտավորությունից:

23. Տարածքային կենտրոնը կարող է միակողմանի հրաժարվել Պայմանագրի կատարելուց և վաղաժամկետ լուծել այն, եթե Պայմանագիրը կնքելուց Շահառուն չի ընդունվել աշխատանքի Գործատուի մոտ՝ առնվազն Պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետով կամ Գործատուն և (կամ) Շահառուն թույլ են տվել Պայմանագրի էական խախտում:

24. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երեք օրինակներից, որոնցից Տարածքային կենտրոնին, Գործատուին և Շահառուին տրամադրվում է մեկական օրինակ:

## IX. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Տարածքային կենտրոն՝**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության

____________________ ՍՍԾ ԲԵՐԴԻ ՏԿ
(Տարածքային կենտրոնի անվանումը)

տարածքային կենտրոն

Գտնվելու վայրը՝ ք.Բերդ, Լևոն Բեկի 1/2
Հեռ. 060652620
Էլ. փոստ berdztk.1992@mail.ru
Հ/հ ------------------------------------------
Ի դեմս ____________________ ՏՆՕՐԵՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ
(համապատասխան լիազորություն ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

Կ.Տ. «15» Սեպտեմբեր 2021

**Գործատու**

____________________ ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՐԳՍԻ
(Գործատուի անվանումը)

Գտնվելու վայրը՝ Մարզ. ՏԱՎՈՒՇԻ Քաղ. ԲԵՐԴԻ Համ. ԲԵՐԴ Փող. ՄԱՇՏՈՑԻ Տուն 54/Ա
Հեռ. 077032259
Էլ. փոստ. artur_safar@mail.ru
Հ/հ 16039007575400
ՀՎՀՀ 70980331
Ի դեմս ____________________ Տնօրեն՝ առողջապահական կազմակերպության ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
(համապատասխան լիազորություն ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

97.916132
70980331

Կ.Տ. «15» Սեպտեմբեր 2021

**Շահառու**

ԾԱՂԿՅԱՆ ԹԱՄԱՐԱ
(ազգանունը, անունը)

Բնակության վայրը՝ Հանր. ՀԱՅԱՍՏԱՆ Մարզ ՏԱՎՈՒՇԻ Քաղ. ԲԵՐԴԻ Համ. ԲԵՐԴ Փող. ՄԱՇՏՈՑԻ Տուն 84/Ա Բնակարան 33
Հեռ. 098864164
Էլ. փոստ.

------------------------------------------------------------
([illegible] ներկայացուցչի ազգանունը, անունը)

------------------------------------------------------------
(Շահառուի կամ ներկայացուցչի ստորագրությունը)

«15» Սեպտեմբեր 2021